

„Հողի ուժը,, վավերագրական ֆիլմի ցուցադրությունը Վայոց ձորում

04.11.2013

Նոյեմբերի 1-ին Եղեգնաձորի մշակույթի տան մեծ դահլիճում տեղի է ունեցել Աննա Թովմասյանի „Հողի ուժը,, վավերագրական ֆիլմի ցուցադրությունը, որին ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելսիկ Հարությունյանը, ՀՀ պաշտպանության նախարարության 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության սպաներ, զինվորականներ, հարյուրավոր քաղաքացիներ:

Ֆիլմը արցախյան ազատամարտի դրդապատճառների, գոյապայքարի ելաձ հայ ժողովրդի տառապանքների և արցախահայության արդար դատը պաշտպանելու եկաձ ռուս կամավորների կյանքի պատմության մասին է:

Ֆիլմի ցուցադրության կազմակերպմանը աջակցել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը: